Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հոկտեմբերի 28 -ի N 664 - Ա
որոշման

«ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամասում հիմնադրամի կողմից կառուցվելիք մանկապարտեզով բնակելի համալիրի շինարարության նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության: Բնակարանները անհատույց բաշխվելու են անապահով տնազուրկ ընտանիքներին
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք, բնագավառը՝ քաղաքաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 950,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամասի կառուցվելիք բնակելի համալիրի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրերը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է մանկապարտեզով բնակելի համալիրի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն: Ծրագրերը

		նախատեսվում է իրականացնել՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 28-ը: Արժեքը՝ 950,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 950,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ